

Ռ. Ա. ԱԹԱՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՍՅՈՒՆԻ ԵՎ ՆՐԱ ՀՈԳԵՎՈՐ ԽՄԲԵՐԳԵՐԸ (Նորահայտ «Միաշաբաթ օր հանգստեան» խմբերգի հրապարակման առթիվ)

Գրիգոր Սյունի Միրզայանցը հայ դասական երաժշտական ստեղծագործության և լնդիանրապես անցյալի ազգային երաժշտական արվեստի ականավոր, բազմաշխատ և բազմարդյուն գործիչներից է. երգահան, ժողովրդական երաժշտությունը գնահատող և հավաքող, երգչախմբի և նվազախմբի խմբավոր, ուսուցիչ... Դեռևս անցյալ դարի վերջերից և մինչև 20-րդ դարի 30-ական թվականների կեսերը իր գործունեության այս բոլոր ոլորտներում Սյունին իր շոշափելի լուսան է ներդրել և, հայ դասական այլ երաժշտների հետ, դարձել է ազգային երաժշտության զարգացմանը սատարող երախտավոր:

Սյունիի ժողովրդական, մասնավորապես գեղջկական երգերի խմբերգային մի շարք մշակումները խորապես թափանցել են հայկատարողական արվեստի ասպարեզը: Ո՞ր երգչախումբը չի երգել, իր ոնկանիրներին հիացնելով ու ջերմացնելով, նրա «Ալագյազ»-ը, «Խնձի ծառ»-ը, «Սարերը հովելա»-ն և «Սարերի հովին մեռնիմ»-ը... Փոքրինչ ստվերի տակ մնացել և գրեթե մոռացության են տրվել Սյունիի հոգևոր ստեղծագործությունները, մինչդեռ այս բնագավառում ևս նա ճշանակալից գործեր է թողել:

...Ծննդով Գանձակեցի (Գետարեն գյուղից), Սյունին իր պատանեկությունը և սկզբնական ուսման ընթացքը անց է կացրել Ղարաբաղում: Այստեղ, Շուշիի թեմական դարբոցում նա աշակերտել է Գարեգին քանի. Հովհաննեսիանին (Նիկոլայոս Թաշճյանի աշակերտներից) և նրա դեկավարու-

թյամբ լուրացրել հայկական ձայնագրությունը: 1891-ին, 15 տարեկան հասակում, ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, մեկ տարի նրա երաժշտության ուսուցիչն եղել է Սահակ Ամատոնին, ապա, մեկ տարի՝ Ք. Կարա-Մուրզան, որի դեկավարությամբ սկսել է լուրացմել եվրոպական երաժշտության տարրական տեսությունը: Պարապել է արդյոք Սուրեն 1893-ից Կարա-Մուրզային փոխարինած Սուրեն սարկավագի՝ ապագայի Կոմիտաս վարդապետի դասարանում և երգել է արդյոք նրա խմբում ևս՝ այս մասին ուղղակի տվյալներ չկան: Բայց, որա փոխարեն, հաստատապես հայտնի է, որ ճեմարան գալով, ծանոթանալով ու մտերմանալով դեռևս ուսանող Կոմիտասի հետ, ի դեմս նրա, ինչպես և Սահակ Ամատոնու, Գրիգորն իրեն գտել է երաժշտական մի միջավայրում, որ ամեն բանից ավելի կարեւոր էր դիտվում ժողովրդի՝ դարերով կուտակած երաժշտական գանձերը նոտաներով հաստատագրելը: Եվ, ահա, Կոմիտասի օրինակով, որի նվիրվածությունը այդ գործին արդեն այն ժամանակ գրեթե մոլեռնանդության էր հասնում, Գրիգորը նոյնպես սկսում է ժողովրդական և հոգևոր եղանակներ գրի առնել, և խոչոր չափով հենց այդ հանգամանքն էր, որ որոշեց նրա ապագա մասնագիտական կոչումը:

Էջմիածնում Կարա-Մուրզային և Կոմիտասին աշակերտած կամ նրանց հետ շլփում ունեցած երաժշտ-ճեմարանականների մի այլ հակումը կամ երազանքն էլ

երգչախումբ կազմել և ժողովրդական երաժշտության համերգ տալն էր: Գրիգորը ավարտելով ճնշմարանի միայն դասարանական բաժինը, արդեն 1895-ին իր հարազատ Շուշիում խումբ կազմեց և տվեց իր «առաջին համերգը»: Այնուհետև մեկնեց Պետերբուրգ ուսման: 1898-ին որպես բոշակառու ընդունվեց կոնսերվատորիա, աշակերտեց համապատասխան պատասխանական բաժին, մասնավորապես ուսանողական բավականին աշխույժ կյանք կար, և Սյունին նաև այդ կյանքի եռանդուն մասնակիցներից էր: Նա դարձավ հայկական համերգերի և ուսանողական տարեկան երեկոյական կազմակերպող, ստեղծեց երգչախումբ և ժողովրդական հվագարանների խումբ, դեկավարեց դրանք: 1899-ից ընդունեց տեղի հայկական եկեղեցու արդեն ճանաչում վայելող երգչախմբի դեկավարությունը, ստվորեցրեց ոչ միայն Ս. Եկմալյանի «Պատարագը», այլև Եկմալյանի օրինակով ինքն ևս հոգևոր երանակներ բազմաձայնեց և կատարեց: Դրանցից էին այն երկու հատվածը, որ հետագայում (Վերանայված վիճակում) նա տպագրել տվեց Գ. Լևնյանի «Գեղարվետ»-ում «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ» և «Ի Վերինն երուաղեմ», որի մասին հեղինակը հետագայում Գ. Լևնյանին գրել էր, թե «ՈՒմսակի-Կորսակովի ամենասիրած երգերից էր և ամեն անգամ հատուկ կուգար լսելու»:

Բարձրագույն երաժշտական ուսումն ավարտելուց հետո Սյունին հրավիրվեց Թիֆլիսի և իր աշխատանքով կապվեց Ներսիսյան դպրոցի հետ: Նա նաև ստանդանեց Թիֆլիսի Վանքի Մայր տաճարում խմբերգային սպասարկումը և այստեղ իր աշակերտական երգչախմբով արժանի կերպով շարունակեց Մ. Եկմալյանի ընդհատված փայլուն գործունեությունը: Դասավանդեց նաև այլ դպրոցներում և ճանաչվեց որպես սիրված ու գնահատված մանկավարժ: Անշուշտ, շարունակեց նաև ստեղծագործական նուանդուն աշխատանքը:

«Ներսիսյան»-ում Սյունիի աշակերտներից էր հետագայում անզուգական երգիշ Շարա Տալյանը, որ Սյունիին գնահատել է որպես իր «առաջին իսկական ուսուցիչը»: Նրա հուշերում նաև կարդում ենք. «Իբրև իմբավար Սյունին փայլում էր բազմաթիվ համերգներում, երբ կատարում էր

ժողովրդական երգերի իր սքանչելի մշակումները... պահանջեց իմ հաջողությունը նաև եկեղեցում՝ Եկմալյանի Պատարագը կատարելիս: Սյունին ստեղծագործել էր իր հանավոր «Քրիստոս ի մէջ»-ը, որ կատարում էին հաճախիս...»:

Սյունի-երաժշտին և մարդուն Տալյանը դիմուկ բնութագրել է նաև որպես «շատ անհանգիստ խառնվածքի տեր»: Եվ գույն նենց արդարիս խառնվածքն էր պատճառը, որ 1908 թվականից սկսած, երկար ժամանակ Սյունին վարեց գրեթե «թափառական» մի կյանք: Նախ մեկնեց Տրավիզոն, որտեղ ժողովրդական երգեր էր հավաքում և ուսումնասիրում հայ գյուղացիության ազգային ու սոցիալական ծանր վիճակը: Ապա՝ աշխատեց Կարինում, դասավանդում էր Սանասարյան վարժարանում և շարունակում ժողովրդական կյանքի իր ուսումնասիրությունները: Հետո նորից Թիֆլիսում էր, գործակցեց այստեղ խմբված հայ երաժշտներին՝ Սահիրիոն և Ռումանոս Մելիքյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Քրիստոփոր Քուշնարյան... դարձյալ խումբ կազմեց և համերգներ տվեց, կատարեց և իր բեմական գործերը, հիմնեց «Հայ տեսարան երաժշտագետների ընկերություն»: 1919-ին հրավիրվեց Թերուան ուսուցչության, ուսումնասիրներ պարսկական դաստիարակում (Մուղամները), ապա նորից եկավ Թիֆլիս, հետո՝ Կ. Պոլիս... Բանատեղծ Մերուժան Պարսամյանը նրա գալը ողջունելով, գրում էր՝ «Գրիգոր Սյունի... երաժշտ, որ իր տաղանդին աշնքան գեղեցիկ արտահայտություններով մեր ամենու համակրության արժանացած է: Ծանոթ է իր արտադրած երաժշտական կտորներով և մասնավորաբար «Անդրանիկի քայլերգով», որուն պես այնքան անսիակ եղանակներ այ ունի...»: Բայց Կ. Պոլսում, ինչպես ինքը Սյունին է գրել, շուտով «Վրա է հասնում քեմալական խումապը» և նա, որ հաստատ որոշում էր ընդունել առողջությունը վերականգնելուց հետո վերջնականորեն հիմնվել ու աշխատել Երևանում, տարագրովով բազմաթիվ հայերի հետ ստիպված տեղափոխվում է Ամերիկա:

Կյանքի վերջին մեկուկես տասնամյակը Սյունին անցկացրեց գլխավորապես Ֆիլադելֆիայում: Այստեղ, տարագիր հայության մեջ, նա մշտապես հանդես եկավ որպես Խորհրդային Հայաստանի ջերմ բարեկամ, իրականացրեց բազմակողմանի հանրօգուտ գործեր: Հիմնեց «Հայ արվեստի միություն»՝ երաժշտական, թատերական և պարի բաժանումքներով, իր կազմած ժողովրդական խմբերով բազմաթիվ համերգներ տվեց,

հայ ժողովրդական երգը իր մշակումներով հնչեցրեց նաև միջազգային լսարաններում... Հայրենիքի կարուն, անշուշտ, զգում էր՝ «Ես ալեքսան եմ կարուտել մեր խորհրդային Հայրենիքին, որ նկարագրել չեմ կարող: Հիվանդությունս պատճառներն են գլխավորն է, որ հայրենիք գալու և ամբողջ ուժով ու եռանդով անոր վերաշինական գործին մասնակցելու քայլերս կամեցնում է», գրել է նա դեռև 1926 թվականին իր համակներից մեկում: Նրա նոր երգերում տեղ գտան իր վերածնված հայրենիքի թևաններն ու կերպարները, տպագրում և կատարում էր նաև սովորակայ կոմպոզիտորների գործեր: Միացյալ Նահանգներում Սյունիի ծավալած ընդարձակ գործունեությունը նկատելի հայաստում էր սիլուռաթավականի ազգային-մշակութային կյանքի կազմակերպմանը և նրանց Սովորական Հայաստանի կամքին ու մշակությին տեղյակ պահելուն: Ինչպես նշված է հայ երաժշտության պատմության աղբյուրներում, 1939 թ. Սյունին իր մահնանացուն կնքեց որպես «սովորակայ աշխատավորության խանդավառ երգի»:

Սյունիի հոգևոր խմբերգերը անհամեմատ սակավ են եղել, քան աշխարհիկ ստեղծագործությունները: Սակայն, դրանք նաև անհամեմատ սակավ չափով են պահպանվել կամ առ այսօր հայտնաբերվել*: Ստորև հակիրճ կանճ կառնենք տպագրված խմբերգերից երկուսի՝ «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ» և «Ը Վերինն Երուսաղէմ» երգերի վրա և քիչ ավելի մանրամասն կներկայացնենք գործնականորեն նոր հայտնաբերված «Միաշաբաթ օր հանգստեան» ստեղծագործությունը: Այս երեք խմբերգերում էլ ցալսուն կերպով դրսուրվել են կոմպոզիտորի գրելաձնի կարևոր հատկանիշներ:

«Քրիստոս ի մեջ»-ը հայկական այսանդական պատարագի լամերեն ծանոթ այն երգերից է, որոնց կատարման ժամանակ ունկնդիրները ինքնաբերաբար ձայնակ-

* Հներանաբապն Սյունիի երգախն ստեղծագործությունը ժամանակին տպագրվել է իր փոքր մասով միայն, իսկ նրա կամքի «քափառական» տպրիներին անոփակ մնացող ձեռագրերը ցրիվ են, կրուել են, և ներկայումս դրանց լրիվ հայտնաբերումը իրավանացվում է համար փնտրումների գնուվ: Տողերին նեղինակը նաև կարմիր և նրաստական կանոնների սահմաններում, բայց երկի սկրզից մինչև վերջ (բացառությամբ 5-րդ երկտողի) հնչող ձայնառությունը և երկրորդական շարժուն մեղեղները, որ եկածային առումով խատորեն բխում են հիմնական մեղեղիական հյութից, ամբողջությանը ոճական որոշակիություն են հաղորդում:

ցում են երգչախմբին, նրա հետ կրկնելով այս դեպքում «քայլերգային» ընթացք ունեցող, մատչելի և հաճելի մեղեղին: Լուղության մեջ վաղուց արմատացած այդ մեղեղին բազմաձայնելիս, Սյունին դրան մոտեցել է բավականաշատ ազատ, ստեղծագործական սկզբունքով: Գոյություն ունեցող և միմյանցից քիչ զանազանվող տարրերակների նման, Սյունիի տարրերակում և խորսային տեքստը միալար վանկաշափում է, և խորերի առաջին չորս երկու սահմաններում իմբնական մեղեղին գրեթե անփոփոխ կրկնվում է: Բայց Սյունին բուն մեղեղին յուրովի խմբագրել, ավելի հարատացրել է, ճիշտ կիմեր առել պարզապես ավելի կնճանացրել, գումենացրել և չերմացրել է, դրան տվել է մի նորը քնարական երանգ, և դա շատ բանով կանխորշել է երկի հոգական ներգործությունը: 5-րդ երկտողի մեղեղին ավելի (քան նոյն երգի այլ տարրերակներում) եռանդուն զարգանում է, և 6-րդինը՝ երգն եզրափակող վերջավորության մեջ՝ անսպասելիորեն հանգչում է մի նոր հիմնաձայնի վրա, ու դա ևս նոր թարմություն է հաղորդում ամբողջությանը:

Սնշուշտ, երգի հաջողության հիմքը մեղեղիի վերամշակումը չէ միայն, նրանուն մեծ դեր է վերապահված նաև ներդաշնակությանը և բազմաձայնության ստեղծագործաբար օգտագործմանը:

Երաժշտական այսպիսի ձևը ընդունված է անվանել «հաստատուն մեղեղիով տարրերակիված քայլակային ձև», և այստեղ, ներդաշնակության առումով, երաժշտական «երկտողերից» ոչ մեկը մյուսի կրկնությունը չէ: Իր ընդհանուր առմամբ փոքր ծավալում այն հարուստ է երկրորդական-մեղեղիական գեղեցիկ ընթացքներով: Վեցանգյան խառն երգականությունը առդյունավետ կիրավիած են նաև երանգային հակադրումներ՝ ընդհանուր առմամբ թանձրից դեպի համեմատաբար պայծառը: Հատկապես տպավորիչ է «Արդ պաշտօնեալք» խորսքուն սկավող երկտողի զորեղ, «գոչական» հնչողությունը և սրանից անցումը դեպի խաղաղ, խոհական ավարտը: Եթե բուն ներդաշնակությունը պահված է եւրոպական հարմոնիայի ավանդական կանոնների սահմաններում, բայց երկի սկրզից մինչև վերջ (բացառությամբ 5-րդ երկտողի) հնչող ձայնառությունը և երկրորդական շարժուն մեղեղները, որ եկածային առումով խատորեն բխում են հիմնական մեղեղիական հյութից, ամբողջությանը ոճական որոշակիություն են հաղորդում:

«Ի Վերին Երտսաղէմ» հոգեհանգստյան երգի համար Սլուշին «Ժամագրքում» տպագրված մեղեդիական տարբերակները չի վերցուել: Նա մեջ է բերել մի այլ, ընդամենը չորս տարբեր հնչյունից հյուսված պարզագույն տարբերակ, որը, սական, իր ձայնակարգային և ձևային կառուցվածքով բավական ինքնատիպ է. սկսելով ձայնակարգի 4-րդ աստիճանով (կիվարտային օժանդակ հենակետ, «դիմող ձայն») և շարունակ անդրադառնալով այդ աստիճանին, մեղեդին «Կոտսակում է» մի լուրատեսակ լարվածություն, որը ամեն մի համաձիգ վերջում հաջիկ թե պարպես է՝ հանգչելով հիմնաձայնի վրա, մինչդեռ մեղեդին կրկին եկում է 4-րդ աստիճան՝ մի նոր պսույտ, լարվածության նոր շրջան սկսելու: Ամրողությամբ՝ դա հիմնական մեղեդիական նյութի «սևեռու միտք հաստատող» բառակի կրկնություն է, որի ընթացքում այդ հիմնական նյութը ելևէջով ու ոհթմով տարբերակվում է: Մեղեդին այդպիսի կառուցվածքը հիշեցնում է հին վիպական որոշ երգերի, օրինակ՝ «Կարոս խաչ»-ի ժողովրդական եղանակավորումը: Մեղեդիական ֆրազների կրկնությունները այստեղ ևս, ինչպես նախորդ երգում, «Բաղդահարված են» մերդաշնակության և բազմաձայնության հնարներով, ոհթմը նույնպես բազմազան է, ուստի և խմբերոն ամրողությամբ ոչ միայն լիահունչ է, այլև հնարավորին չափ շարժում, «գգայուն», ուրեմն և՝ տպավորիչ:

«Միաշաբաթ օր հանգստեան» գործը հեղինակն անվանել է տաղ: Այն ոչ միայն տպագրված, այլև ըստ երևույթին կատարված է չի եղել և այստեղ հրապարակվում է առաջին անգամ:

Բանատեղծական բնագիրը (վերագրուած է Ն. Շնորհալուն, տե՛ս, օրինակ, Մ. Միանարյանց, Քնար հայկական, էջ 93) բրվանդակությամբ մտերմիկ-անմիջական և կառուցվածքով միանգամայն պարզ է՝

Միաշաբաթ օր հանգստեան
Կանաքը եկին ի Գերեզման
Եւ ողբային արտասուական
Խնդրել զջիսու անապական:

Զայնեաց հրեշտակն ուրախական.—
Զայն որ եղին ի Գերեզման,
Զեզ աւետի՛ս, յարեա՛ Փեսայն,
Դրունք դժոխց խորտակեցան:

Մարիամեանքն ուրախացան
Եւ յԱստուծոյ միշտ գոհացան,
Առ աշակերտսն անդրէն դարձան՝
Տալ աւետիս վասն Յարութեան:

Բայց երգը հայ միջնադարյան այն նմուշներից է, որոնցում խոսքային տեքստի արտաքրումը գտնվում է երկրորդ գծի վրա, և աղպիսի դեպքում երածշտական բաղկացուցիչն է դառնում երկի բովանդակության, տրամադրության հիմնական կրողը:

Սյս երգի ավանդական եղանակը մեզ է հասել անցյալ դարի վերջին քառորդում վերաձայնագրված երկու՝ Ն. Թաշճանի (1878) և Կոմիտասի (1893) տարբերակներով: Սյունին թեթևակի խմբագրելով, օգտագործել է Թաշճանի գրառումը, որ տըպագրված էր «Զայնագրեալ երգեցողութիւնք արբյ Պատարսգի» հատորում (2-րդ հրատարակություն, էջ 118—114, նոյն եղանակով երգված է նաև «Այսօր տօն է Ծննդեան» երգը, էջ 112—113): Թաշճանի գրառումը հեռու է կոմիտասան տարբերակի ժողովրդական ոիթմա-եկնէջային բնորոշությունից, բայց դարձյալ (ինչպես նախորդ երգը) խիստ լուրահատուկ կառուցվածք ունի, բաղկացած է համամասնական և համաչափ դասավորված Յ հատվածներից: Ստորև՝ սխեման ըստ տակտերի քանակության:

| A | B | C | D | E |
|-------|----|-----|----|---|
| 7 | 12 | 5+7 | 12 | 7 |
| F | | | | |
| 6+6+6 | | | | |

Չորրորդ հատվածի միջում և վերջին հատվածից հետո հավելվող «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ֆրազը հատվածների տակտային հարաբերությունը չի խախտում:

Առաջին երկու հատվածը՝ A և B կազմում են հիմնական մեղեդիական նյութի շարադրության բաժին, 3, 4, 5-րդը՝ C, D և E հյութի մշակման, զարգացման բաժին և վերջինը՝ F եզրափակման բաժին:

Նոյնպիսի «կազմակերպվածություն» ըլլորոշ է նաև մեղեդիի ձայնակարգային տոնայնական կառուցյին: A և դրա ընդարձակված տարբերակը Բ ընթանում են (ելրոպական տեսության տերմիններով ասած) հիպո-դորիական — էլլական սիմեորում, որը Հիմնական տոնայնությունն է: Զարգացման C և D հատվածներում գրիսավորում է նախորդ տոնայնության ցածի ձգտող հնչյունի վրա կառուցված լլա մատորը (բազմաձայնության մեջ՝ միքսուիդիական-մեղեդիական մաժոր), որ Անկան ՅՈՒՆ (լարվածություն առաջ բերող) տոնայնություն է: E-ն գլխավոր հիմնաձայնի վրա, կվարտային դիմող հնչյունով և ցած 2-րդ աստիճանով սիմեոր՝ ավարտելուց առաջ ընդհանուր տոնայնական կառուցը թԱՐՄԱՑՆՈՂ է, և վերջին F հատվածը

(բաղկացած երեք ենթահատվածից) միք-սովորական մի մաժոր շեղումներով հիմ-նական սի մինոր տոնայնությունը ՀԱՍ-ՏԱՏՈՂ է: Նյութի ձևային և լադա-տոնայ-նական պայմանի «նպատակահարմար» շերտավորվածությունը և զարգացումը մե-ղեղի ընթանուր կառուցվածքը դարձնում են տրամարանված և բովանդակությունը՝ ամբողջական, ափարտուն:

Իր խմբերգը հորինելիս կոմպոզիտորն այս դեպքում է նյութի հետ վարվել է ա-զատ, ստեղծագործարար: Կարևոր հշանա-կություն է ստացել մեղեղիական բնագրի յուրովի մեկնարանում՝ այդ բնագրում բա-վականաշատ առատ Շերկայացված «մե-լիզմատիկ» (զարդարող) հնչյունները մի փոքր պակասեցելով, հեղինակը դրանք դիտել է ոյսեւ մեղեղի հիմնական կա-ռույցի հնչյուններ:

Գործը գրված է արական եռաձայն խըմ-քի համար, մեներգող տեսորի և մանկա-կան խմբի կարճատն մասնակցությամբ: Բազմաձայնան եղանակը ալվանդական ազատ-կոնտրաստային պոլիֆոնիան է, որ կարգավորվում է եռահնչյուն հարմոնիա-ներով, որոնք քիչ թե շատ որոշակի կանգ-առումներով չեն հատկանշում մեղեղիի բաժինների միջև եղող ցեզուրները, այլ հրանցում ստեղծում են միշտակյալ կապեր: Բնորոշ է անընթատ շարժումը՝ ուղիղ կամ հակառակ ելեկային և կամ միայն ոիթ-մային հմանակումներով: Ներդաշնակու-թյունը գերազանցապես մոդալ-լադային ե-րանք ունի՝ համապատասխան մեղեղիի ձայնակարգային հատկանիշներին (թեև հեղինակը չի վարանել օգտագործելով նաև եվրոպական-դասական պարզագույն ֆունկ-ցիոնալ հարմոնիայի, Շերաոյալ նաև խրոմատիզմի միջոցները, եթե մեղեղիի լադային ոլորտներն այդ հնարավորություններն են ընձեռել): Այն նաև առավելաբար

կոնստանտային է, ինչի շնորհիվ երաժշ-տության մեջ հիմնականում թագավորում է բարեկերպության, բարեկարգության զգացումը: Սակայն, երկն ամրողությամբ առ-նուված, զորկ չէ նաև հոգումնածին պա-հերից և դիմամիկական բարձրակետերից, որոնք գոյանում են առանձին ձայների վե-րելքների ու վայրէշքների, ինչպես և երա-ժշտության ձայնակարգային թարմացում-ների միջոցով:

Հարցն հենց այն է, որ Սյունին իր այս գործը չի դիտել որպես մի պարզուկ ու-րախական երգ, այլ կառուցել է որպես ա-վելի խոր ապրումներ դրսուրող, գաղա-փար և զգացում կրող երաժշտության մի ազատ հոսք, հույզի և հայեցողության յո-րատեսակ բախում կա այստեղ: Ընթանուր հնչողությունը նկատելի լուսավորվում է «աւետիս» հատվածի մեներգային կատա-րումով (երանգային զանազանությունը ընդգծելու նպատակով հարմար կիմի այդ հատվածը հանձնարարել քնարական տե-սորի), որն իր հերթին «կյանքի և կոչում» մանկական ձայների հատկացված, ավելի ևս լուսավոր ֆրազը՝ «Յարեա՛ Քրիստո-ի մեղելոց...»:

«Միաշաբաթ օր հանգատեան» մեղեղիի բազմաձայն մշակումը, որ իրականացված է գեղագիտական յուրովի մոտեցմամբ և այդ մոտեցման սահմաններում՝ վարպետու-րեն, ոչ միայն հետաքրքրական է հեղինա-կի ստեղծագործական կենսագրության ա-ռումով, այլև ունի ինքնուրույն ու մնայուն գեղարվեստական արժեք, և դրանով իսկ հոգևոր բովանդակությամբ հայ դասական կոմպոզիտորական ժառանգության մեջ մի հերենատիպ ներդրում է:

Գ. Սյունիի հոգևոր խմբերգերը, նրա լա-վագույն աշխարհիկ խմբերգերի հետ հա-վասարապես, արժանի են գեղարվեստա-կան կատարման:

ՄԻԱԵՎՎԱՅ ՕՐ ՀԱՆԳՍՏԵԱՆ

A [In tono epico]

Գրիգոր Սյունիք

The musical score consists of ten staves of music. Staff 1 (Treble) starts with 'Մի -' and continues with 'ա -'. Staff 2 (Bass) starts with 'Մի -' and continues with 'ա -'. Staff 3 (Treble) starts with 'Մի -' and continues with 'ա -'. Staff 4 (Treble) starts with '- 2մ -' and continues with 'բար' (bar). Staff 5 (Bass) starts with '- 2մ -' and continues with 'բար'. Staff 6 (Treble) starts with '- 2մ -' and continues with 'բար'. Staff 7 (Treble) starts with 'օր' and continues with 'հան -'. Staff 8 (Bass) starts with 'օր' and continues with 'հան -'. Staff 9 (Treble) starts with 'օր' and continues with '- գըս -'. Staff 10 (Bass) starts with '- գըս -' and continues with 'հան -'. The score includes dynamic markings such as ff, f, and ff, and section markers A and B.

C₁

- տիան,
- տիան,
- տիան,

Tenore solo **C₂**

Ա -
ա -
ա -
ա -

[Մանկական զայն]
Voce bianca

3

Հա - րեան ի մե - ռե - լու:

Հա - րեան քրիս-տոն ի մե - ռե - լու:

ի մե - ռե - լու:

Կա -

Կա -

Կա -

Sheet music for voice and piano, page 98. The vocal part is in soprano clef, the piano part in bass clef. The key signature is A major (two sharps). The vocal line consists of three staves, each with lyrics in Armenian. The piano accompaniment is in four staves.

Section E:

- նայքն ն - կին
- նայքն ն - կին
- նայքն ն - կին

Section F:

qñ - rññ -
qñ - rññ -
qñ - rññ -

Section F1:

- ման, ո -
- ման, ո -
- ման, ո -

F₂

- լն -

- լն -

- լն -

- տիս,
ա - լն -

- տիս,
ա - լն -

- տիս,
ա - լն -

կա - րնաւ ի մե - ռն - լոյ:
կա - րնաւ բրիս-տու ի մե - ռն - լոյ:
ի մե - ռն - լոյ:

- տիս,
ա - լն - տիս:

- տիս:

- տիս: